ԱՐՄԱՆԻ-ԱՐՄԻ ԵՐԿԻՐՆ
ԸՍՏ ԱՔԱԴԱԿԱՆ ԵՒ ԷԲԼԱՅԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐԻ
(Պատմա-աշխարհագրական ակնարկ)

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍԵԱՆ

Ք.ա. 24-րդ դարի վերջին քսանամեակը շրջադարձային նշանակութիւն ունեցաւ Միջագետքի եւ ողջ Առաջաւոր Ասիայի պատմութեան մէջ: Միջագետքի Քիշ քաղաքում, հաւանաբար, կառավարական յեղաշրջմամբ գահ բարձրացաւ սեմական ծագում ունեցող, ժողովրդի ստորին խաւի ներկայացուցիչ Շարրումքէնը[1], որին պատմագրութեան մէջ կոչում են Սարգոն Հին կամ Սարգոն Աքադացի (Ք.ա. 2316-2261թթ.): Շումէրի արքայ Լուգալզիգեսիի կողմից Քիշի աւերումից յետոյ, Սարգոնն իր մայրաքաղաքը դարձրեց մինչ այդ ոչ նշանաւոր Աքադէ քաղաքը, որի անունով յետագայում կոչուեց ողջ թագաւորութիւնը: Վերափոխելով բանակը՝ նա երեք-չորս տարում կարողացաւ իր իշխանութեան տակ միաւորել Միջագետքի քաղաք-պետութիւնները: Դրանից յետոյ Սարգոնը ձեռնամուխ եղաւ հեռաւոր արշաւանքների կազմակերպմանը: Իրենց նախադէպը չունեցող այդ արշաւանքների ընթացքում, նա եղաւ Սիրիայում, Փոքր Ասիայում եւ Հայկական Լեռնաշխարհի հարաւային շրջաններում, Զագրոսեան լեռներում: Նրա յաղթական պատերազմները փառաբանող Միջագետքեան սկզբնաղբիւրները կարեւոր տեղեկութիւններ են պարունակում արշաւանքի ենթարկուած երկրամասերի պատմութեան հնագոյն շրջանի լուսաբանման համար:

Առաջաւոր Ասիայի Ք.ա. 3-րդ հազարամեակի պատմութեան վերականգնման համար իրենց կարեւորութեամբ չեն զիջում Սարգոն Աքադացու թոռան՝ Աքադական Հարստութեան չորրորդ գահակալ Նարամ-Սուէնի (Ք.ա. 2236-2220 թթ.) պատերազմների մասին պատմող սկզբնաղբիւրները: Վերջինս Սարգոն Աքադացու «Շումէրի եւ Աքադի արքայ» տիտղոսը փոխարինեց «տիեզերքի արքայ», «աշխարհի չորս կողմերի արքայ», «աշխարհի արքայ» տիտղոսներով եւ աստուածացուեց իր կենդանութեան օրօք: Աքադական Հարստութեան յիշեալ երկու արքաների մասին պատմող սկզբնաղբիւրներն, ի թիւս

առաջաւորասիական այլ երկրամասերի, ուշագրաւ տեղեկութիւններ են հաղորդում Հայկական Լեռնաշխարհի հարաւային շրջանների վերաբերեալ։

Հայկական Լեռնաշխարհի Ք.ա. 3-րդ հազարամեակի պատմութեանը վերաբերող յոյժ արժէքաւոր տեղեկութիւններ են պարունակում նաեւ Էբլայի[2] գրաւոր յուշարձանները։ Նարամ-Սուէնի դէպի հիւսիս-արեւմուտք կատարած արշաւանքների տարեգրութիւններում մի քանի անգամ յիշատակւում են Արմանում (Արմանի)[3] եւ Էբլա երկրները, ընդ որում, այդ երկիրները երբեմն յիշւում են միասին։ Էբլայի բնագրերում յաճախ է հանդիպում Արմի երկրանունը, որն իրաւացիօրէն նոյնացւում է Արմանիի հետ։

Սոյն յօդուածում նպատակ ունենք անդրադառնալու Ք.ա. 24-23-րդ դարերում աքադական եւ էբլայական սկզբնաղբիւրներում յիշատակուած Արմանի-Արմի երկրին վերաբերող փաստերին եւ դրանց ընձեռած հնարաւորութեան սահմաններում լուծելու այդ երկրի տարածքային ընդգրկման հարցը։

ՍԿԶԲՆԱՂԲԻՒՐՆԵՐԸ

Հենց սկզբից հարկ ենք համարում նշել, որ ձեռքի տակ չենք ունեցել խնդրոյ առարկայ երկրին վերաբերող բոլոր սկզբնաղբիւրները։ Դրանց մի մասին ծանօթացել ենք միջնորդաբար՝ այլ աշխատութիւններից օգտուելով, իսկ մի մասն էլ մնացել է մեզ համար անհասանելի։ Այդուհանդերձ, մեր ունեցած գրականութիւնն էլ բաւարար է լուսաբանելու Արմանի-Արմի երկրի տեղորոշման հարցը։

Արմանի երկիրը յիշւում է Սարգոն Աքադացու մասին պատմող նոր-ասուրական մի բնագրում[4]։ Աւելի հարուստ են Նարամ-Սուէնի գործերը փառաբանող բնագրերը։ Հիւսիս կատարած արշաւանքների մասին մեզ պատմում են Միջագետքի Ուր քաղաքից գտնուած նրա արձանագրութիւնների պատճէնները, որոնցում յիշատակւում է Արմանին[5]։ Արշաւանքներից մէկի մասին է պատմում «Նարամ-Սուէնն ու իր թշնամիները» անունը ստացած խեթերէն բնագիրը[6], որում Արմանին վկայուած է Նարամ-Սուէնի դէմ դաշնակցած տասնեօթ երկրների շարքում։ Նարամ-Սուէնի յաղթարշաւի վկայութիւն է նաեւ Դիարբեքիրի մօտ գտնուած նրա յաղթանակի յուշակոթողը[7]։ Արմանի-Արմի երկրանուան յետագայ յիշատակումներ են հանդիպում խեթական, ասուրա-բաբելական, Վանի թագաւորութեան արձանագրութիւններում եւ այլ աղբիւրներում, որոնք ստորեւ կ'օգտագործուեն իբրեւ լրացուցիչ փաստարկներ։

Եթէ միջագետքեան սկզբնաղբիւրները պատերազմական տարեգրութիւններ են՝ ապա հիւսիսսիրիական (էբլայական) աղբիւր-

ները, հիմնականում, տնտեսական վաւերագրեր են։ Դրանք վերաբերում են էբլայի արքունի ծախսերին, այլ երկրների ու քաղաքների հետ ունեցած առեւտրա-փոխանակային եւ այլ յարաբերութիւններին։ Ձեռքի տակ չունենալով էբլայական բնագրերի հրատարակութիւնները՝ դրանցից օգտուել ենք Վ. Իվանովի[8], Ա. Արքիի եւ Փ. Գարելլիի[9] յօդուածների միջնորդութեամբ։

ՀԱՐՑԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Աքադական աղբիւրների Արմանի երկրի տեղորոշման հարցը տասնամեակներ շարունակ եղել է բանավէճի առարկայ։ 1929 թ. ականաւոր խեթագէտ Բ. Հրոզնին, հիմնուելով Սարգոն Աքադացու մասին պատմող բնագրի, ինչպէս նաեւ Թիգլաթպալասար Ա-ի ու Սալմանասար Գ-ի արձանագրութիւնների հաղորդումների վրայ, Արմանին տեղադրեց Զագրոսում եւ բացառեց այդ տեղանուան ընդհանրութիւնն Արմենիա երկրանուան հետ[10]։ Նոյն թուին Գ. Գարանֆիլեանը հանդէս եկաւ Արմանին Բեհեսթունի արձանագրութեան Արմինայի հետ նոյնացման տեսակէտով[11]։ Այնուհետեւ Արմանին մի շարք եւրոպացի ուսումնասիրողների կողմից (որոնց մէջ էր նաեւ իր տեսակէտը վերանայած Բ. Հրոզնին) տեղադրուեց Հիւսիսային Սիրիայում՝ Հալէպի Խալվան կամ Խալման տեղում[12]։ 1938 թուին Արմանին կրկին կապուեց Հայկական Լեռնաշխարհի հետ[13]։ Ն. Ադոնցը, քննադատելով Արմանին Հայաստանի հետ կապելու փորձերը, հնարաւոր էր համարում Արմանիի նոյնացումը Հալէպի Խալվան կամ աստուածաշնչեան Հերմոնի հետ[14]։ Սակայն Արմանին Հայաստանի հետ նոյնացնելու տեսակէտը գնալով աւելի էր (եւ է) քաղաքացիութիւն ստանում. այդ տեսակէտը պաշտպանեցին Ե. Քասունին[15], Ա. Ալպոյաճեանը[16], Հ. Ժամկոչեանը[17], Լ. Բարսեղեանը[18], Ա. Կիֆիշինը[19], Վ. Խաչատրեանը[20], Մ. Գավուքճեանը[21], Ռ. Իշխանեանը[22] եւ ուրիշներ։ Այսուհանդերձ, Արմանիի տեղադրութեան վերաբերեալ միասնական կարծիք չկայ։ Տիրապետող երկու տեսակէտներն Արմանին տեղադրում են Հայկական Լեռնաշխարհում կամ Հիւսիսային Սիրիայում։

Էբլայագիտութիւնը երիտասարդ գիտութիւն է, եւ նրա շատ հարցերի հետ Արմիի խնդիրն էլ կը դառնայ երկարատեւ ուսումնասիրութեան առարկայ։ Սակայն, այս կարճ ժամկէտում էլ Արմիի մասին արտայայտուել են իրարամերժ կարծիքներ։ Սկզբում կասկածի տակ դրուեց Արմիի տեղանուն լինելու հարցը[23], իսկ դրա լուծումից յետոյ Արմանիի նման Արմին եւս ուսումնասիրողներին բաժանեց երկու խմբի։

Ստորեւ մեր ունեցած աղբիւրների քննութեամբ կը փորձենք ցոյց տալ Արմանի-Արմի երկրի գտնուելու վայրը։

ԱՔԱԴ ԵՒ ԱՐՄԱՆԻ

Արմանի երկիրն առաջին անգամ յիշատակւում է Սարգոն Աքադացու մի արշաւանքի առընչութեամբ։ Ըստ այդ արշաւանքի մասին պատմող նոր-ասուրական բնագրի՝ յիշեալ արքան Լուլուբի երկրից յետոյ լինում է Արմանիում, ապա վերադառնում Աքադ[24]։ Եթէ Սարգոնը Լուլուբիից Աքադ է վերադարձել ուղիղ գծով (ինչը, որ չի հասկացւում բնագրից)՝ ապա այս Արմանիին կարելի է նոյնացնել Բաբելոնի եւ Աշուրի միջեւ յիշատակուող Արման-Ակարսալի տեղանուան (դրա մասին՝ ստորեւ) հետ, որը որեւէ ուղղակի կապ չունի Հայկական Լեռնաշխարհի հետ։ Սակայն, Սարգոնը արշաւանքը Լուլուբիից կարող էր շարունակել հիւսիս-արեւմուտք եւ մտնել Սիմեսեան Արմանիի (սրա մասին եւս քիչ յետոյ) տարածք։ Հետեւաբար, բերուած տեղեկութիւնը վճռական նշանակութիւն չունի Արմանի երկրի տեղորոշման խնդրում։

Նարամ-Սուէնի գործերը ներկայացնող Ուրի արձանագրութիւնները յստակ ուրուագծում են նրա արշաւանքը դէպի հիւսիս։ Նա հասնում է Ամանոս, ապա արշաւում Հիւսիսային Միջագետք, որտեղ էլ «Սուբարտուի տանուտէրերն ու Բարձրաւանդակի (Լեռնաշխարհի) իշխաններն իրենց հարկերը բերին նրա առաջ»։ Այդ առթիւ յիշւում է նաեւ Արմանի երկիրը[25]։ Նարամ-Սուէնից առաջ Ամանոս էր արշաւել Սարգոն Աքադացին, որի ճանապարհին յիշատակւում են Մարին, Եարմուտին եւ Էբլան[26]։ Աքադից Ամանոս ճանապարհին Արմանին չի նշւում, ինչն էլ քիչ հաւանական է դարձնում այդ երկրի տեղադրումը Հիւսիսային Միջագետքում։ Փոխարէնը՝ Արմանին յիշւում է Սուբարտուից յետոյ՝ իբրեւ Բարձրաւանդակի երկիր։ Կասկածից վեր է, որ Սուբարտուի հարեւանութեամբ յիշատակուող Բարձրաւանդակը Հայկական Տաւրոսն է կամ Հայկական Լեռնաշխարհի աւելի ընդգրկուն մի շրջան (գուցէ ողջ լեռնաշխարհը)։ Հետեւաբար, այդ տարածքում էլ պէտք է տեղադրել Արմանի երկիրը։

Արմանիի տեղորոշման համար խիստ կարեւոր նշանակութիւն ունի Նարամ-Սուէնի հիւսիս կատարած արշաւանքի մասին վկայող «Նարամ-Սուէնն ու իր թշնամիները» կոչուող խեթերէն բնագիրը։ Այն հաղորդում է միջագետքցի արքայի դէմ ելած հիւսիսային տասնեօթ երկրների դաշնութեան մասին։ Երկրներից ու նրանց արքաներից մի քանիսի անունները չեն պահպանուել, իսկ ընթերցուող երկրանունները հետեւեալն են.

1. Գուսուա
2. Պակկ ի...
3. Ուլլիվի
4. ...
5. Խաթթի
6. Կանէշ
7. (Պուրուշխանդա)[27]
8. Ամուրրու
9. Պարասի
10. ...
11. Արմանի
12. Մայրիների լեռներ (Ամանոս)
13. ...
14. Լարակ
15. Նիկկի
16. Թուրկի
17. Կուրսաուրա

Այս դաշնակցութեան տարածքային ընդգրկման մասին դիտողութիւնները պէտք է արուեն տրամաբանական մէկ ելակէտից՝ վաղընջական մի ժամանակաշրջանում, ինչպիսին է Ք.ա. 23-րդ դարը, որեւէ ռազմական դաշինք չէր կարող ընդգրկել շատ մեծ հեռաւորութեան վրայ գտնուող երկրներ: Եւ քանի որ դաշինքի մէջ մտած երկրներից յստակօրէն տեղադրուող չորսը՝ Ուլլիվին, Խաթթին, Կանէշը եւ Ամանոսը գտնուել են Փոքր Ասիայի արեւելեան, Հայկական Լեռնաշխարհի արեւմտեան եւ դրանց յարակից հարաւային շրջաններում, իսկ Նարամ-Սուէնի յաղթակոթողը գտնուել է Դիարբեքիրի մօտ, դաշնակցութեան միւս երկրները եւս պէտք է որոնել նշուած ու յարակից տարածքներում:

Ուլլիվի երկիրը յիշատակւում է խեթական, ասուրա-բաբելական ու Վանի թագաւորութեան սեպագիր արձանագրութիւններում՝ Ուլլիվանդա[28], Ուլլիբի[29] եւ Ուլլիբանի[30] ձեւերով: Այն տեղադրւում է Հայաստանի հարաւ-արեւմուտքում՝ Ղուլփ բնակավայրի տեղում (Դիարբեքիրից արեւելք)[31]:

Խաթթին խեթական պետութեան անուանումն է, որի մայրաքաղաքը գտնուել է այժմեան Բողազքէօյ հնավայրի տեղում (Անկարայի մօտ):

Կանէշ քաղաքը եղել է Փոքր Ասիայի, Հայաստանի հարաւարեւմտեան շրջանի եւ Հիւսիսային Սիրիայի առեւտրական կէտերի համակարգի կենտրոն: Այն գտնուել է Կեսարիա (Մաժաք) քաղաքի մօտ՝ այժմեան Քիւլ-Թեփէ հնավայրի տեղում:

Պուրուշխանդան (եթէ ճիշտ է ենթադրեալ ընթերցումը), գտնուել է Կիլիկեան Տաւրոսի եւ Հալիս գետի ոլորանի միջեւ, Տուզ լճի մօտ[32]:

Ամուրրուն նախկինում նոյնացուել է ամորէացիների երկրի հետ[33], որը զբաղեցրել է Շումէրից եւ Աքադից արեւմուտք ընկած տարածքները: Սակայն, ինչպէս ասուեց, նման հեռաւորութեան վրայ հազիւ թէ կնքուած լինէր ռազմական դաշինք, նամանաւանդ, որ Ամուրրուի տարածքն արդէն պէտք է նուաճուած լինէր Նարամ-Սուէնի կողմից: Մեր կարծիքով՝ այս Ամուրրուն Սարգոն Բ-ի յիշատակած Անմուրուն է, յետագայ Փոքր Հայքի Ամարան (Համարա) եւ գտնուել է Սեբաստիայի նահանգում, Տեւրիկ քաղաքից ոչ հեռու[34]:

Պարասին նոյնացուել է Բարախշի (Պարախշի), Պարսու եւ Պարսուա (Պարսուաշ) երկրանունների հետ[35]: Առաջին երկուսը տեղադրւում են Էլամի եւ յարակից տարածքներում: Պարսուն յայտնի է Բեհեսթունի արձանագրութիւնից եւ համապատասխանում է այժմեան Ֆարս նահանգին, իսկ Պարախշին Բաբելոնի նկատմամբ աւելի հեռու է գտնուել Էլամից: Սրանց հետ նոյնացումը մեզ խիստ անհաւանական է թւում նախ հեռաւորութեան պատճառով, եւ երկրորդը՝ Էլամը Աքադի կողմից նուաճուել էր Նարամ-Սուէնի անմիջական նախորդի՝ Մանիշտուշուի օրօք[36]: Հաւանական ենք համարում Պարասիի նոյնացումը ասուրաբաբելական եւ Վանի թագաւորութեան արձանագրութիւններում վկայուած Պարսուա (Պարսուաշ) երկրի հետ, որը գտնուել է Ուրմիա լճի հարաւակողմում՝ Մանա երկրի հարեւանութեամբ[37]:

Ցաւօք, մեզ չի հասել ցուցակում Արմանիին նախորդող երկրանունը, իսկ յաջորդը յայտնի Ամանոսի լեռներն են՝ Կիլիկեան Տաւրոսի հարաւ արեւելեան կողմում (Հիւսիսային Սիրիայի արեւմուտքում):

Թուրկին (որոշ աղբիւրներում՝ Թուրուկի) բազմիցս յիշատակւում է առաջաւորասիական բնագրերում[38]: Այն տեղադրւում է Ասորեստանից հիւսիս, Զագրոսի հիւսիսային լեռնաճիւղերին[39] եւ, հաւանաբար, իր անունն է թողել Վանի նահանգի Հաքեարի գաւառի Թուրկունիս բնակավայրին[40]:

Եւ վերջին՝ Կուրսաուրա երկիրը, կարծում ենք կարելի է ենթադրաբար տեղադրել Փոքր Ասիայի արեւելեան կամ Հայկական լեռնաշխարհի արեւմտեան գաւառներում՝ հիմնուելով այդ տեղանուան վերջին -ուրա բաղադրիչի խեթա-լուվիական ծագման վրայ[41]:

Արմանի երկրանուան յետագայ յիշատակումներին կ'անդրադառնանք քիչ յետոյ, բայց մինչ այդ անհրաժեշտ ենք համարում վկայակոչել դրանցից մէկը: Խեթական Թուդխալիաս Դ. արքայի տարեգրութեան մէջ միասին յիշատակւում են Արմանա եւ Ուլլիվանդա երկրանունները: Ուլլիվանդան, ինչպէս վերը նշուեց, Նարամ-Սուէնի դէմ ելած Ուլլիվին է՝ ասուրա-բաբելական եւ Վանի թագաւորութեան աղբիւրների Ուլլիբին եւ Ուլլիբանին. տեղանուան վերջին -անդա մասնիկն ունի խեթական ծագում[42]: Ուլլիվիի յիշատակումը Դիարբեքիրից արեւելք եւ Արմանիի հետ վկայուելը խեթական բնագրում ենթադրում ենք վերջինիս Ուլլիվիին յարակից տարածքներում գտնուած լինելը:

Ամփոփելով Նարամ-Սուէնիի մասին խեթերէն բնագրի տեղագրական վերլուծութիւնը՝ տեսնում ենք, որ նրա դէմ դաշնակցած հիւսիսային երկրները տարածուել են Ուրմիա լճի հարաւ եւ հարաւ-

արեւմտեան շրջաններից (Պարաս եւ Թուրկի) մինչեւ Փոքր Ասիայի կենտրոն (Խաթթի, Կանէշ եւ Պուրուշխանդա (՞) ու Ամանոսի լեռներ: Նման տեղորոշումը միանգամայն հաւանական է թւում, մանաւանդ, որ Նարամ-Սուէնն ի փառաբանումն եւ ի յիշատակ հիւսիսում տարած իր յաղթանակի՝ յուշակոթող է կանգնեցրել Դիարբեքիրի մօտ[43]: Իսկ Դիարբեքիրը գտնւում է դաշնակցած երկրների մեր տեղադրութեամբ ուրուագծուող տարածքաշրջանի կենտրոնում: Աքադերէն եւ խեթերէն բնագրերը ոչ միայն չեն հակասում, այլեւ լրացնում են միմեանց:

Ուշադրութեան արժանի է մի հանգամանք եւս. աքադական բնագրերում Նարամ-Սուէնը փառաբանւում է որպէս «Նուաճողը Արմանիի եւ էբլայի»[44]: Ինչո՞ւ էր աշխարհակալ Նարամ-Սուէնը հիւսիսի եւ հիւսիս-արեւմուտքի նուաճած երկրների մէջ առանձնացնում եւ նման մեծ նշանակութիւն տալիս յատկապէս այս երկու երկրներին: Հարցի հնարաւոր պատասխանը գտնուեց 1975 թուին, երբ իտալացի հնագէտները յայտնաբերեցին էբլան: Առաջաւոր Ասիայում ունեցած դերի ու հարեւան երկրների վրայ տարածած ազդեցութեան պատճառով ուսումնասիրողներն էբլան «կայսրութիւն»[45] կոչեցին: Այն Նարամ-Սուէնի նուաճած երկրների մէջ եղել է հիւսիս-արեւմտեան գերտէրութիւնը: Պէտք է կարծել, որ նոյն նշանակութիւնը հիւսիսում ունեցել է Արմանին, եւ Արմանիի ու էբլայի նուաճումը խորհրդանշել է հիւսիսի եւ հիւսիս-արեւմուտքի հպատակեցումը: Հնարաւոր է, որ Խորենացու «Ողբում» Հայաստանին տրուած «Հանուրց հիւսիսականաց վեհագոյն» («բոլոր հիւսիսային երկիրներից վեհագոյն») պատուանուն-մակդիրը Խորենացին վերցրած լինի իր սկզբնաղբիւրներից, որոնք օգտուել են սեպագրերից, եւ այդ մակդիրը վերցուած լինի Ք.ա. 3-րդ հազարամեակի բնագրերից:

Այժմ անդրադառնանք Արմիի վերաբերեալ էբլայի գրաւոր աղբիւրների հաղորդած տեղեկութիւններին:

ԷԲԼԱ ԵՒ ԱՐՄԻ

Էբլայի բնագրերում Արմին երբեմն յիշատակւում է էբլայի հետ (Eb-la^{ki} wa Ar-mi^{ki})[46] եւ յիշեցնում աքադական աղբիւրների Արմանուն ու էբլան: Նման ձեւով արձանագրուելը կարող էր նշանակել երկու երկրների միաւորումը մէկ պետութեան մէջ (համմ. Սարգոն Աքադացու պետութեան անուանումը՝ «Շումէրի եւ Աքադի թագաւորութիւն»). էբլայական վաղ շրջանի բնագրերում Արմին յի-

չատակւում է իբրեւ առանձին արքայ, իսկ աւելի ուշ՝ Էբլայի կուսակալ (փոխարքայ) ունեցող երկիր[47]: Որտե՞ղ է գտնուել այդ երկիրը:

Արդէն ասուել է, որ աքադական բնագրերի քննութիւնը խիստ անհաւանական է դարձնում Արմանիի տեղադրումը Հիւսիսային Սիրիայում: Ինչ վերաբերում է Արմանիի (Արմիի) Հալէպի հետ նոյնացնելուն՝ ապա այն եւս չի դիմանում քննութեան. Էբլայական բընագրերը Արմիից անկախ յիշատակում են Հալէպը՝ Խալաբի ձեւով. այն նոյն կերպ յիշւում է նաեւ Մարիի (Միջագետքի քաղաք-պետութիւններից) արխիւներից գտնուած բնագրերում[48]:

Էբլայի բնագրերից մէկն Արմին յիշատակում է Sa-Ml+SIT Ax(?)^{ki}-ից եւ Du-lu քաղաքից յետոյ[49]: Sa-Ml+SI-TAx^{ki}-ն ընթերցւում է նաեւ Sa-x^{ki}, Sa-za^{ki} եւ հանդիսացել է Էբլայի կենտրոնի անուանումը: Du-lu քաղաքը սովորաբար յիշւում է Ուրշուից[50] յետոյ եւ Իրիթումից[51] ու Խառանից[52] առաջ[53]: Այսինքն՝ այդ քաղաքը գտնուել է Ուրշուի եւ Խառանի շրջանում: Էբլա-Ուրշուի եւ Խառանի շրջան – Արմի յաջորդականութիւնը յուշում է, որ վերջինս պէտք է որ գտնուէր առաջին երկու բնակավայրերը կապող գծի ուղղութեան վրայ, այն է՝ Եփրատի Հայկական Տաւրոսով անցման շրջանում կամ յարակից տարածքներում: Ցիշենք, որ այս տարածքը համապատասխանում է աքադական աղբիւրների Բարձրաւանդակին (Սուբարտուից հիւսիս), եւ հենց այս տարածքում՝ Դիարբեքիրի մօտ է Նարամ-Սուէնը կանգնեցրել յաղթանակի յուշակոթողը: Այդ շրջանում է տեղադրւում նաեւ Ուլլիվանդայի հարեւանութեամբ յիշուած Արմանա երկիրը (Ք.ա. 13-րդ դար):

Մէկ այլ բնագրում[54] յիշւում են Արմիի երկու բնակիչ, որոնցից մէկն անուանուած է Հայայի միջնորդ (լիազօր): Այնուհետեւ, նոյն բնագրում յիշատակւում է Ազի տեղանունը (կամ գուցէ ցեղանունը): Վերջինս ակնյայտօրէն յիշեցնում է խեթական աղբիւրների Ազի երկրանունը (հմմտ. հայկական Ազորդի հետ), որի կենտրոնը գտնուել է Մեծ հայքի Տայք նահանգի տարածքում, ժամանակակից Թորթում գետի աւազանում[55]: Մի ուրիշ բնագրում Հայա անունը կապւում է Hutimu տեղանուան հետ, որը յիշատակւում է Զաբարում, Ութիգա, Ուրշու (Հիւս. Սիրիա), Իրիթում, Խառան (Հիւս. Միջագետք) եւ Թիշում քաղաքներից յետոյ[56]: Չի բացառւում, որ այս Ութիմուի անունը պահպանուած լինի Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Խոյթ գաւառի անուան մէջ, որն այժմ յայտնի է Խութ ձեւով[57]:

Այսպիսով, մի կողմից Արմիի յիշատակումն Ազիից առաջ, միւս կողմից Արմիի կապուելը Ութիմուի հետ Հայա ցեղանուան

(յատուկ անուան) միջոցով, ինչպէս նաեւ վերը բերուած համադրումներն աներկբայելի կերպով վկայում են, որ էրլայի բնագրերում հանդիպող Արմի երկրանունը վերաբերել է Հայկական Լեռնաշխարհի տարածքին:

ԱՐՄԱՆԻ-ԱՐՄԻ ԵՐԿՐԱՆՈՒԱՆ ՑԵՏԱԳԱՑ ՑԻՇԱՏԱԿՈՒՄՆԵՐԸ

Քրիստոսից առաջ 24-23-րդ դարերից յետոյ Արմանի-Արմի երկրանունը յիշատակուած ենք գտնում Քրիստոսից առաջ 3-2-րդ հազարամեակների սահմանագծով թուագրուող Աշուրից գտնուած մի երկլեզուեան արձանագրութեան մէջ՝ Ուր/ա/մէ ձեւով[58]: Արձանագրութիւնը, սակայն, տեղադրութեան վերաբերեալ տուեալներ չի հաղորդում:

Առանձնայատուկ ուշադրութեան է արժանի Սարգոն Աշուրացու (Քրիստոսից առաջ 1980-1948 թթ., ըստ Ադոնցի) մի արձանագրութիւն, որում թուարկում է Աշուրի վեց նահանգ: Զուպրեան Մարի, Ռիպագում, Տիգրիսի կամ Աշուրի մարզ, Առափխա մինչեւ Լուբդի, Լուլուբի եւ Սիմեսեան Արմանի[59]: Մարին Եփրատի միջին հոսանքի նշանաւոր քաղաքներից է, գտնուել է Սիրիայի ու Իրաքի այսօրուայ սահմանի եւ Եփրատի հատման շրջանում: Զուպրին (Շուբրիա կամ Շուբարտու) գտնուել է Հայկական Լեռնաշխարհի հարաւ-արեւմուտքում կամ հիւսիսային Միջագետքում, եւ Մարիի «Զուպրիան» կոչուելը, հաւանաբար, ցոյց է տուել այդ մարզի տարածուածութիւնը հիւսիս: Ռիպագումը եւս գտնուել է Եփրատի վրայ, Մարիից հարաւ, ժամանակակից Բաղդադի մօտ: Աշուրը կառուցուած է եղել Տիգրիսի վրայ, վերջինիս Փոքր Զաբի հետ խառնուելու վայրից քիչ հիւսիս: Առափխան տեղադրւում է ժամանակակից Քերքուքի մարզում (Իրաք), իսկ Լուբդին ասուրական պետութեան սահմանային ամրոց է, որը գտնուել է Տիգրիսից արեւելք՝ Ասորեստանի հարաւում[60]: Այս վերջին մարզն ընդգրկել է պետութեան հարաւ-արեւելեան շրջանները: Լուլուբին տեղադրւում է Ադէմ եւ Փոքր Զաբ գետերի վերին հոսանքում՝ Առափխայի ու Ուրմիա լճի միջեւ: Սիմեսին տեղադրւում է Վանայ լճից հարաւ-արեւելք[61]: «Սիմեսեան Արմանի» տեղանունը, թերեւս, նշանակում է Արմանիի տարածուածութիւնը մինչեւ Սիմեսի (հմմտ. Զուպրիան Մարի) կամ, գուցէ, ցոյց է տալիս Արմանի երկրի Սիմեսիին հարեւան մի շրջան, որը տուեալ ժամանակաշրջանում մտել է ասուրական պետութեան կազմի մէջ: Թուարկուած մարզերն, ինչպէս տեսնում ենք, ունեն տրամաբանական յաջորդականութիւն՝ հիւսիս-արեւմուտքից ժամ-սլաքի հակառակ ուղղութեամբ դէպի հիւսիս-արեւելք: Այսպիսով, Սարգոն Աշուրա-

ցու յիշատակած Արմանին պէտք է տեղադրել Հայկական Լեռնաշխարհի հարաւ-արեւելեան շրջանում՝ Վան եւ Ուրմիա լճերի միջեւ եւ դրանից հարաւ։

Աղադ-Ներարի Ա-ի (Ք.ա. 1307-1275 թթ.) եւ Բաբելոնի արքայի միջեւ կնքուած դաշնագրում երկու թագաւորութիւնների սահմանին նշւում է Արման-Ակարսալի տեղանունը[62]։ Աշուրի եւ Բաբելոնի միջեւ Արման տեղանուան յայտնուելը կամ պատահական նըմանութիւն է Հայկական Լեռնաշխարհի Արմանիի հետ կամ լեռնաշխարհի բնակչութեան տարաբնակեցման արդիւնք է[63]։

Խեթական արքայ Թուդխալիաս Դ-ի յիշատակած Արմանա երկրի մասին արդէն խօսել ենք։ Արմանի-Արմի երկրանուան հետ պէտք է կապել նաեւ խեթական աղբիւրների Արմատանա[64] եւ Թեգարամա[65] տեղանունները։ Երկուսն էլ յիշատակւում են Հայկական Լեռնաշխարհի արեւմուտքում, իսկ Թեգարամա (Թոգարմա) — Թորգոմա երկրանունը Աստուածաշնչի մեկնիչներն ու հայ մատենագիրները համարել են Հայաստանի հնագոյն անուանումներից մէկը[66]։

Գալով ասուրա-բաբելական եւ Վանի թագաւորութեան սկզբնաղբիւրներին՝ տեսնում ենք, որ դրանցում պահպանուել են բազմաթիւ տեղանուններ, որոնք կարելի է կապել Արմանի-Արմի երկրանուան հետ։

Թիգլաթպալասար Ա-ն (Ք.ա. 1115-1077 թթ.) Հայկական Լեռնաշխարհի արեւմուտքում բազմիցս յիշատակում է ուրումացիներին (= Ուրումա երկրի բնակիչներին)[67], Արամու երկիրը, որի ճանապարհին էր գտնւում Շուբրիա երկիրը[68], ինչպէս նաեւ Արումա լեռնանունն[69] ու Ուրումի ծառատեսակը[70]։ Աշուրնաձիրապալ Բ-ն (Ք.ա. 884-859 թթ.) Շուբրիա եւ Նիրդուն երկրներից յետոյ եւ Նայիրիից առաջ յիշում է ներքին Ուրումու երկիրը[71], եւ Նայիրիի հարեւանութեամբ յիշատակում Արումու երկրանունը[72]։

Վանի թագաւորութեան գրաւոր յուշարձաններում պահպանուած Ուրմէ եւ Արմէ տեղանունները գտնուել են Հայկական Տաւրոսի շրջանում[73]։

Սալմանասար Գ-ն (Ք.ա. 859-824 թթ.), իսկ աւելի քան մէկ դար անց նաեւ Սարգոն Բ-ն (Ք.ա. 722-705 թթ.) յիշատակում են Արամալի (Արմարիլի) երկրանունը՝ Վանայ լճից Արեւելք տարածուող շրջանում[74]։ Այս տեղանունը կարելի է նոյնացնել Սարգոն Աշուրացու արձանագրութեամբ պահպանուած (Սիմեսեան) Արմանիի հետ, ինչպէս նաեւ վերոյիշեալ Նարամ-Սուէնի դէմ պատերազմած Արամ(է) երկրի անուան հետ, որին կ'անդրադառնանք յետագայում այլ առիթով։

Միեւնոյն «ար/ա/մ» հիմքն ունեցող եւ Վանայ լճի արեւելեան եւ արեւմտեան շրջաններում գտնուած այս տեղանունների միջեւ կապող օղակ է հանդիսանում Ադադ-Ներարի Բ-ի (Ք.ա. 810-782 թթ.) յիշատակած Արիմէ երկրանունը՝ Քաշիարի լեռների եւ յարակից շրջաններում[75], ուստի եւ միանգամայն օրինաչափ պէտք է համարել Վ. Խաչատրեանի տեսակէտը Արմանի երկրի տարածքային ընդգրկման վերաբերեալ[76];

Եւ վերջապէս Բեհեսթունի արձանագրութեան մէջ յիշատակուող երկրանունը[77], որն, աներկբայելի կերպով վերաբերում է ողջ Հայաստանին:

Բացի վերը բերուածներից՝ կարելի է ցոյց տալ Արմանի-Արմի երկրանուան հետ կապուող այլ տեղանուններ եւս, որոնց կ'անդրադառնանք այլ առիթով:

Ինչպէս տեսանք, Ք.ա. 24-6-րդ դարերում երկու տասնեակից աւելի անգամ յիշատակուող «ար/ա/մ» հիմքով տեղանունները խմբաւորուում են Հայկական Լեռնաշխարհի հարաւային եւ արեւմտեան սահմանների լայնութեամբ, այսինքն՝ այն տարածքներում, որոնց լեռնաշխարհի հետ առընչուելիս առաջին հերթին հանդիպել են մեզ հասած յիշատակութիւնների հեղինակները: Փաստերի նման առատութեան պայմաններում չի կարելի ընդհանրութիւն չտեսնել բոլոր օտարազգիների (բացառութեամբ վրացիներից ու քրդերից) կողմից Հայաստեղանունների միջեւ: Բացի այդ՝ միջագետքեան սկզբնաղբիւրներում Հայաստանը, սովորաբար, հանդէս է եկել մէկ հաւաքական անուամբ՝ Վերին երկիր, Նայիրի, Ուրարտու: Հաշուի առնելով այդ հանգամանքը՝ կարելի է կարծել, որ լեռնաշխարհի հարաւ արեւելքում եւ հարաւ-արեւմուտքում վկայուած Արմանի անունը եւս տրուել է ողջ Հայկական Լեռնաշխարհին: Աւելորդ չէ նշել նաեւ, որ ցայսօր սեմական աքադացիների յեռնորդները համարուող արաբները հայերին կոչում են արմանի:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ի մի բերելով ողջ վերը ասուածը՝ կարելի է կատարել հետեւեալ եզրայանգումները.

ա. Միջագետքեան սկզբնաղբիւրների քննութիւնը թոյլ չի տալիս Արմանին տեղադրել Հիւսիսային Սիրիայում, իսկ էբլայական բնագրերում Հալէպի յիշատակումը Ḫa-la-bi ձեւով ի սպառ անհիմն է դարձնում Արմանի-Արմիի Հալէպի հետ նոյնացման փորձերը:

բ. Սարգոն Աքադացու մասին պատմող նոր-ասուրական բնագրի Արմանին կարող է նոյնացուել Ադադ-Ներարի Ա-ի յիշատակած

սահմանային (Աշուր-Բաբելոն) Արման-Ակարսալի տեղանուան հետ, (եթէ Սարգոնը Լուլուբիից ուղիղ գծով է վերադարձել Աքադ), որը ուղղակի կապ չունի Հայկական Լեռնաշխարհի հետ կամ Սարգոն Աշուրացու յիշած Սիմեսեան Արմանիի հետ (եթէ Սարգոն Աքադացին շարունակել է արշաւանքը Լուլուբիից հիւսիս-արեւմուտք, ուր կարող էր մտնել Արմանի եւ յետոյ միայն վերադառնալ Աքադ), որը տեղադրւում է Վանայ եւ Ուրմիոյ լճերի միջեւ եւ դրանից հարաւ ընկած շրջանում:

գ. Նարամ-Սուէնի մասին պատմող Ուրի արձանագրութիւնները հնարաւորութիւն են տալիս Արմանին տեղադրելու Սուբարտուից (Հիւսիսային Միջագետք) հիւսիս գտնուող Բարձրաւանդակում՝ Հայկական Լեռնաշխարհի հարաւ-արեւմուտքում (չի բացառւում, որ «Բարձրաւանդակ» ընդհանրական անուամբ կոչուած լինէր ողջ Հայկական Լեռնաշխարհը):

դ. Նարամ-Սուէնի մասին պատմող խեթերէն «Նարամ-Սուէնն ու իր թշնամիները» կոչուող բնագրում յիշուող հիւսիսային երկրների դաշնակցութեան ընդհանուր տարածքը ձգուել է Ուրմիա լճի աւազանից մինչեւ Ամանոս եւ Խաթթի, ուր եւ գտնուել է նոյն դաշնակցութեան անդամ Արմանին:

ե. Այն հանգամանքը, որ Նարամ-Սուէնը հիւսիսում եւ հիւսիս-արեւմուտքում իր դէմ ելած բազմաթիւ երկրների մէջ առանձնացնում է Արմանին եւ Էբլան, մտածել է տալիս, որ այս երկու երկրներն եղել են նշուած տարածքների գերտէրութիւնները:

զ. Արմիի մասին էբլայական բնագրերի հաղորդած տուեալների հիման վրայ այն տեղադրւում է Հայկական Լեռնաշխարհի հարաւ-արեւմուտքում, այսինքն՝ լեռնաշխարհի Էբլային ամենամօտ գտնուող շրջանում:

է. Ք.ա. 24-6-րդ դարերում Հայաստանի հարաւային եւ արեւմրտեան սահմանների լայնութեամբ յիշատակւում են, «ար/ա/մ» հիմքով քսանից աւելի տեղանուն: Հաշուի առնելով այն հանգամանքը, որ միջագետքեան գրաւոր աւանդութեան մէջ, սովորաբար, Հայկական Լեռնաշխարհը հանդէս է գալիս մէկ հաւաքական անուամբ (Վերին երկիր, Նայիրի, Ուրարտու), իսկ Արմանին վկայուած է լեռնաշխարհի երկու (հարաւ-արեւելեան եւ հարաւ-արեւմտեան) շրջաններում, կարելի է եզրակացնել, որ Արմանին եւս ողջ լեռնաշխարհին տրուած անուանում է:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. «Շարրումֆէն» նշանակում է «յիրաւի նշմարիտ արքայ»: Այն, հաւանաբար, տիտղոս է, ստացուած՝ գահ բարձրանալուց յետոյ: Ըստ աւանդութեան՝ նախքան գահ բարձրանալը նա ս.յգեպան է եղել: Տես՝ **Istoriya Drévnévé Vostoka**, T. I. **Mésopotamya**, Moskva, 1983, s. 234:
2. Էբլան գտնւում է Հիւսիսային Սիրիայում, Հալէպից 75 կմ. հարաւ-արեւմուտք: 1974-1975 թթ. Իտալական հնագիտական արշաւախմբին յաջողուեց բացել Էբլան (Թել-Մարտիխ հնավայր), որտեղից գտնուեց շուրջ 17 հազար բնագիր: Տես՝ **Drévnyaya Ebla**, Moskva, 1985, s. 318: Այսուհետեւ՝ **DE**.
3. Նարամ-Սուէնի աքադերէն արձանագրութիւններում երկիրը կոչւում է Արմանում, որի վերջին «ում»ը շումերա-աքադական մասնիկ է (հմմտ. Կուտիում, Ուրբիլում, Էուլուրում եւայլն): Խեթերէն բնագիրը պահպանել է Արմանի ձեւը, որը եւ մենք կ'օգտագործենք այս յօդուածում:
4. Հ. Գ. Գարանֆիլեան, «Նարամ-Սին եւ իր թշնամիները ըստ հատեան բնագրի», *Հանդէս Ամսօրեայ*, Ե. տարի, Վիեննա, 1929, էջ 287-288:
5. A. Kifishin, «Guéographichéskiyé Vazzréniya Drévnikh Shumerov Pri Patési Goodéya (2162-2137 gg. Do N. E.)», **Paléstinskii Sbornik**, vip. 13, 1965, s. 64-65. Ե. Քասունի, *Նախահայկական Հայաստան*, Պէյրութ, 1950, էջ 28-20:
6. Ն. Ադոնց, *Հայաստանի Պատմութիւն*, Երեւան, 1972, էջ 26. Մ. Ա. Գավուքճեան, *Արմէն եւ Հայ Անունների Մագումը եւ Ուրարտուն*, Պէյրութ, 1973, էջ 7-12: Այսուհետեւ՝ Գավուքճեան, *Հայ եւ Արմէն*: Լ. Ա. Բարսեղեան, «Հնագոյն ցեղային միութիւնը Հայաստանում», *Տեղեկագիր Հասարակական Գիտութիւնների*, թիւ 1, Երեւան, 1962, էջ 88:
7. Քասունի, էջ 28. Գավուքճեան, *Հայ եւ Արմէն*, էջ 16-17:
8. Viach. Vs. Ivanov, «Viédélényé raznikh khronologuicheskikh sloyév v drévni armiyanskom i probléma pervonachalnoy structuri teksta guimna Va/kh/aknu», *Պատմաբանասիրական Հանդէս*, թիւ 4, Երեւան, 1983, էջ 30-33: Այսուհետեւ՝ *ՊԲՀ*:
9. Նշուած հեղինակների աշխատութիւնների ռուսերէն թարգմանութիւններն ամփոփուած են **Drévnyaya Ebla** ժողովածուում:
10. Լ. Ա. Բարսեղեան, «Դիտողութիւններ ARMANI, ARME եւ URME երկրների մասին», *ՊԲՀ*, թիւ 2, Երեւան, 1964, էջ 324: Այսուհետեւ՝ Բարսեղեան, «Դիտողութիւններ»: Գարանֆիլեան, էջ 287-288. Գավուքճեան, *Հայ եւ Արմէն*, էջ 13-14:
11. Գարանֆիլեան, էջ 287-288:
12. Բարսեղեան, «Դիտողութիւններ», էջ 324-325:
13. Ուսումնասիրութեան հեղինակն է Վարդուհի Քալանթար Նալբանդեանը, որի աշխատութիւնը չունենալով ձեռքի տակ՝ հիմնւում ենք Ալպոյաճեանի հաղորդման վրայ: Տես՝ Ա. Ալպոյաճեան, *Պատմական Հայաստանի Սահմանները*, Գահիրէ, 1950, էջ 9:
14. Ադոնց, էջ 26-27:
15. Քասունի, էջ 28-29:
16. Տես՝ Ալպոյաճեան, էջ 9. նաեւ՝ ներդիր քարտէսը:
17. Հ. Ժամկոչեան, *Հայաստանը Նախնադարեան Համայնական Հասարակութեան եւ Մարկատիրութեան Շրջանում*, Երեւան, 1961, էջ 116-120:
18. Բարսեղեան, «Դիտողութիւններ», էջ 324-328:
19. Kifishin, s. 65.

20. V. Khatchatryan, **Vostochniyé Provintzi Khetzkoy Imperii**, Erevan, 1971, s. 106-107.
21. Գավուքճեան, էջ 7-32: Տես նաեւ Մ. Ս. Գավուքճեան, *Հայ ժողովրդի Ծագումը*, Մոնթրէալ, 1982, էջ 33-43:
22. Ռաֆայէլ Իշխանեանի ուսումնասիրութիւնների ամփոփումին համար տես նրա *Հայ ժողովրդի Ծագման ու Հնագոյն Պատմութեան Հարցեր*, Երեւան, 1988, էջ 42-47: Տես նաեւ *Բնիկ Հայերէն Բառեր եւ Հնագոյն Փոխառութիւններ*, Երեւան, 1989, էջ 56-57: Այս թուարկուած աշխատութիւնները տուեալ հարցին նուիրուած ուսումնասիրութիւնների ողջ ցանկը չեն կազմում:
23. **DE**, s. 284-285 (Փ. Գարելիի յօդուածը):
24. Գարանֆիլեան, էջ 287-288. Kifishin, s. 105:
25. Տես՝ նոյն, էջ 64-65, Ե. Քասունի, էջ 29:
26. Գավուքճեան, *Հայ եւ Արմէն*, էջ 32. Kifishin, s. 64:
27. Այս տեղանուան ենթադրեալ ընթերցումը վերցրել ենք Ադոնցից, որը վկայակոչում է Ֆորերի, Բ. Հրոզնու եւ Ա. Սէյսի ուսումնասիրութիւնները: Տես՝ Ադոնց, էջ 26-27:
28. Khachatryan, s. 104-107.
29. I. M. Diyakonov, «Assyro-Vavilonskiyé Istochniki po istorii Urartu», **Vestnik Drevnei Istorii**, 1951, 2-4, p. 26, 42, 43, այսուհետեւ՝ AVIIU.
30. G. A. Mélikishvili, **Urartskiyé Klinoobrazniyé Nadpisi**, Moskva, 1960, s. 150-151, 445.
31. Բարսեղեան, «Հնագոյն», էջ 87-90:
32. Ըստ մեզ հասած աղբիւրների՝ Սարգոն Ա-ի դացին արշաւելով հասել է Փոքր Ասիայի խորքում գտնուող այդ քաղաքը: Տես՝ **Istoriya Drévnévo**, s. 238-239:
33. Գարանֆիլեան, էջ 285-286. Գավուքճեան, *Հայ եւ Արմէն*, էջ 15-16:
34. AVIIU, p. 46 (178). Ս. Տ. Երեմեան, *Հայաստանը Ըստ «Աշխարհացոյց»ի*, *Երեւան*, 1963, էջ 62. *Թ. Խ. Յակոբեան. Մա. Տ. Մելիք-Բախչեան, եւ Հ. Խ. Բարսեղեան, Հայաստանի եւ Յարակից Երկրների Տեղանունների Բառարան*, հտ. 1, Երեւան, 1986, էջ 282:
35. Գարանֆիլեան, էջ 286-287:
36. **Istoriya Drévnévé**, c. 246.
37. AVIIU, p. 28 (174), 35, 49(6), ծանօթ. 13: *Հայ ժողովրդի Պատմութեան Քրեստոմատիա*, Երեւան, 1981, էջ 26-27, 34, 43-44, 61, 68:
38. Այս տեղանունը յիշատակւում է Շամշի-Ադադ Ա-ի (Ք.ա. 1813-1781 թթ.), Համմուրապիի (Ք.Ա. 1792-1750 թթ.) եւ Ադադ-Ներար Ա.-ի (Ք.Ա. 1307-1275 թթ.) արձանագրութիւններում:
39. AVIIU, p. 1. *ծանօթ.* 11:
40. Յակոբեան եւ այլք, հտ. 2, Երեւան, 1988, էջ 499:
41. Գ. Բ. Ջահուկեան, *Հայոց Լեզուի Պատմութիւն — Նախագրային Ժամանակաշրջան*, Երեւան, 1987, էջ 335, 337:
42. Khachatryan, s. 105.
43. Գավուքճեան, *Հայ եւ Արմէն*, էջ 16-17. Քասունի, էջ 28:
44. Գավուքճեան, *Հայ եւ Արմէն*, էջ 18, 29-31:
45. DE, s. 320 (Դիակոնովի յօդուածը):
46. DE, s. 285 (Փ. Գարելիի յօդուածը):
47. Ivanov, s. 32.
48. DE, s. 286 (Փ. Գարելիի յօդուածը):
49. Նոյն, էջ 286-287:

50. Նոյնացուում է ժամանակակից Ուրֆայի հետ:
51. Մարիի բնագրերում՝ Ir-ri-id, խեթական աղբիւրներում՝ Ir-ri-ta/e, Ալալախի եւ միջինասուրական բնագրերում՝ Ir-ri-di: Տեղադրւում է Կարքեմիշի մօտ, Եփրատից արեւելք. տես՝ DE, s. 283:
52. Հիւսիսային Միջագետքի նշանաւոր քաղաքներից մէկն է:
53. DE, s. 286:
54. Ivanov, s. 31-32:
55. Khachatryan, s. 128-139:
56. Ivanov, s. 32-33:
57. Երեմեան, էջ 55:
58. Ivanov, s. 30-31:
59. Ադոնց, էջ 26:
60. Ադոնցը Լուբդին տեղադրում է յետագայ Արզանենի (Աղձնիք) տարածքում: Աւելի հաւանական է թւում այդ տեղանուան նոյնացումը Ասորեստանի հարաւային սահմանային նոյնանուն ամրոցի անուան հետ, տես՝ AVIIU, թ.1, ծան. 7:
61. Սիմեոի անունով կիրճ է յայտնի Սալմանասար Գ-ի եւ երկիր՝ Աշուրնաձիրպալ Բ-ն: Տես՝ Ադոնց, նոյն տեղում; AVIIU, թ. 23 (1, 54):
62. Ադոնց, էջ 27:
63. Ք. ա. 3-րդ հազարամեակում յայտնի են Հայկական լեռնաշխարհից կատարուած գաղթեր Հիւսիսային Կովկաս, Կիլիկիա, Սիրիա, Պաղեստին եւ այլուր: Տես՝ *Հայ ժողովրդի պատմութիւն*, Երեւան, 1971, էջ 139-140:
64. Khachatryan, s. 90-91:
65. Նոյն, էջ 94-96:
66. Ժամկոչեան Հ., էջ 120-123:
67. AVIIU, թ.10 (2, 89), 11, 12, 13, 18; ՀԺՊՔ (Քրեստոմատիա), էջ 21:
68. AVIIU, թ. 18:
69. AVIIU, թ. 10 (2, 63), 10 (3, 73):
70. AVIIU, թ. 10 (4, 43):
71. AVIIU, թ. 23 (2, 2):
72. AVIIU, թ. 26 (ob., 36):
73. Արմէի մասին տես՝ N. V. Arutunian, *Toponomika Urartu*, Erevan, 1985, s. 39: Ուրմէի մասին տես՝ նոյն, էջ 210-211:
74. AVIIU, թ. 27 (2, 54), 46 (116) ծան.16, 49 (269) ծան. 64; Հմմտ. ՀԺՊՔ (Քրեստոմատիա), էջ 31-32, 34 :
75. Arutunian, s. 35-36:
76. Khachaterian, s. 106:
77. Գ. Նալբանդեան, *Դարեհ Վշտասպի Բիսեթունեան Արձանագրութիւնը*, Երեւան,1964, էջ 8 եւ 14-15:

Ա. Մ.

THE ARMANI-ARMI COUNTRY ACCORDING TO THE ACCADIAN AND EBLAYAN SOURCES
(A geo-historical survey)

(SUMMARY)

ARTAK MOVSISIAN

Making an abundant use of the givens of both ancient and modern historiography, The Assyrian, Accadian, Hittite and other mesopotamian inscriptions, and the new findings from the Ebla excavations in Syria, the author tries to locate Armani/Armi one of the components of Ancient Armenia, prior to the creation of Urartu, the country of Ararat. At the end of his lengthy and meticulous study of the givens and new findings and an overwhelming analysis, Movsisian concludes that as Upper Country, Nayiri and Urartu were collective names given to the Armenian Tableland, so also Armani/Armi was for the south-eastern and south-western sections of the same geographical regions presented both the country Armenia, and its people, the Armenians.